ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

204-19

« 09» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 42 որոշումը:

Առդիր 3 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » նոյեմբերի 2019 թվականի N 42

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՓԱՐԱՄՈՒԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ և ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վահանզնի համայնքի բնակիչ Աշոտ Ավթանդիլ Փարեմուզյանը /ներկայացուցչի միջոցով/ դիմում է ներկայացրել Վահագնի համայնքի ղեավարին խնդրելով վերսկսել Աշոտ Փարեմուզյանին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ վարչական վարույթը. կայացնել բարենպաստ վարչական ակտ՝ Աշոտ Փարեմուզյանի ընտանիքին Վահանզնի համայնքի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում ընդգրելու մասին:

Հաշվի առնելով դիմումում բարձրաձայնված հարցը, դիմումին կից ներկայացված ապցույցները, հիմք ընդունելով «Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը 30.10.2019 թ-ին որոշում է կայացվել վերսկսել վարչական վարույթը.

07.11.2019 թ.-ին հրավիրվել է վարչական վարույթի լսում, իրականացվել է վարույթի քննարկում, կայացվել է որոշում վարչական վարույթի քննարկման ժամկետը երկարաձգելու և լրացուցիչ ապացույցներ ձեռքբերելու մասին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.11.2008թ.-ի թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված պահանջները՝ 18.11.2019 թ.-ին համայնքի ղեկավարի կարգադրությամբ կազմվել է բնակարանային պայմանների ստուգման հանձնաժողով:

22.11.2019 թ.-ին Հանձնաժողովը իրականացրել է բնակարանային պայմանների ստուգում, կազմվել է ստուգման ԱԿՏ, որի համաձայն Հանձնաժողովը պարզել է ընտանիքի անդամների կազմը, ներկայիս բնակության պայմանները:

Գործի նյութերից պարզվել է, որ Աշոտ Ավթանդիլի Փարեմուզյանի ընտանիքը հաշվառված է եղել 29.12.2007 թվականի Վահագնի համայնքի բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում և 10.12.2008 թվականի Վահագնիի գյուղապետի 1988թ. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում:

Կադաստրի կոմիտեի կողմից 26.09.2006 թվականին բնակելի տան գրանցման պատճառով դուրս է մնացել 2008 թվականի դեկտեմբերի 15-ի հերթացուցակից:

«Վանաձոր նախագծող» ՍՊ ընկերության կողմից 18.07.2019 թվականին տրվել է N 19/19Ե ՀՀ Լոռու մարզ, Վահանգնի Համայնքի 8-րդ փող., 14 տուն հասցեում Աշոտ Փարեմուզյանին պատկանող շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, որի համաձայն՝ եզրակացվել է, որ Վահանգնի Համայնքի 8-րդ փող., 14 տուն հասցեում Աշոտ Փարեմուզյանին պատկանող շինության ներկա վիճակը գնահատվում է անավարտ (կիսակառույց) մինչև 50 տոկոս:

ՀՀ Կադաստրի կոմիտե 26.08.2019թ. -ի տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, որում կատարվել է սխալի ուղղում և բնակելի տան կառուցվածության աստիճան նշվել մինչև 50 %:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե՝

ա) վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.

բ) առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն.

գ) ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել նրանց, սակայն այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին.

դ) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Վերևում թվարկված փաստերի և վկայակոչված իրավական հիմնավորումների արդյունքում կարող են հանգել եզրակացության, որ դիմումատուն 1988թ.-ի երկրաշարժի հետևանքով դարձել է անօթևան /հիմք արխիվային տեղեկանք/, մշտապես բնակվել և բնակվում է Վահագնի համայնքում /հիմք Վահագնի համայնքի տնտեսական գրքերը, անձնագրային հաշվառման փաստը հավաստող տեղեկությունները/, նրանց բնակարանային պայմանները չեն բարելավվել /կիսակառույց շինությունը չի կարող գնահատվել որպես բնակարանային պայմանների բարելավման փաստ/, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ, ՀՀ կառավարության 13.11.2008թ. ընդունված թիվ 1337-Ն որոշմամբ համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշոտ Փարեմուզյանի 3 անձից՝ ինքը՝ Աշոտ Ավթանդիլի Փարեմուզյանը, Հայկ Աշոտի Փարեմուզյանը,Կարինե Արտավազդի Սաքանյանը բաղկացած ընտանիքը հաշվառել Վահագնի համայնքի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած և բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող անձանց հերթացուցակում՝ 2 սենյակից բաղկացած բնակելի տուն ստանալու համար:
2. Սույն որոշման պատճենը ուղարկել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրը և կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում՝ համայնքի ղեկավրին կամ ՀՀ վարչական դատարանում:

Վահագնի համայնքի ղեկավար՝ **Ս. Կոստանդյան**